

ISSN 1829-0531

Ռ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
№ 3 (37)

ԵՐԵՎԱՆ - 2017

**ԻՐԱԿԱՆԻ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՏԱԿԱՆԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՋՈՐՋ ՄՈՒՐԻ «ԱՌԱՔՑԱԸ» ԴՐԱՄԱՅՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Ջորջ Մուր, «Առաքյալը» դրաման, Պողոս առաքյալ, Հիսուս Քրիստոս, Աստվածաշունչ, մեկաստան, քրիստոնեություն, հրաշք, Դամասկոս, հոգի, ներածական նամակ:

Ключевые слова и выражения: Джордж Мур, драма «Апостол», апостол Павел, Иисус Христос, Библия, монастырь, христианство, чудо, Дамаск, душа, вступительное письмо.

Key words and expressions: George Moore, drama "The Apostle", Apostle Paul, Jesus Christ, Bible, monastery, Christianity, miracle, Damascus, soul, introductory letter.

Անգլիացի ճանաչված գրող Ջորջ Մուրի ստեղծագործական ժառանգության զգալի մասը նվիրված է կրոնական թեմաներին, մասնավորապես Աստվածաշնչի մեկնությանը, ուր հեղինակը դրսևորում է համարձակ մոտեցումներ, կատարում եզակի մեկնումներ: Ամենին էլ պատահական չէ, որ նրա կրոնական հայացքներն այդքան առիներող և ուշագրավ են: Դրանք հետևանք են վերջինիս տարիներ շարունակ հավատքի ասպարեզում կատարած քրտնաջան պրայտումների, ինչ-որ տեղ հերքումների ու գաղափարական խոր փոփոխությունների: Ուստի բոլորովին էլ անսպասելի չեն նրա անդրադարձները քրիստոնեության խեղիքներին, կրոն, որը, կարելի է ասել, դարձավ գրողի անմեկնելի ու ինքնօրինակ գաղափարների խոսափողը:

Ջ. Մուրն իր ստեղծագործությունների նյութ է դարձնում ոչ միայն Հիսուսին, որը, ըստ հեղինակի համոզման, թեպետ խաչ է բարձրացել, բայց ամենին էլ չի մահացել, այլ նաև Պողոս առաքյալին կամ Պողոս Տարսուսացուն (ըստ ավանդության՝ նա ծնունդով Կիլիկիայի Տարսոն քաղաքից էր), որը թերևս առաջին անգամ անգլիական գրականության էջերում հանդես է գալիս որպես ինքնուրույն կերպար:

Ջ. Մուրի կրոնական հայացքները, որոնք նրա քաղաքական համոզմունքների արգասիքն են, սկիզբ են առնում դեռևս հեղինակի վաղ երիտասարդական տարիներից, երբ 1870-ականների վերջերին Փարիզից

մորն ուղղված նամակում նա գրում է: «Ես էիմա նարդում եմ միայն Բայզակ, Հյուզո, Շեքսպիր և Աստվածաշունչ»¹: Աստվածաշնչի մեկնումների հանդեպ գրողի հետաքրքրությունը պայմանավորված էր ֆրանսիացի արձակագիր և գրաքննադատ էդուարդ Դյուշարդինի (1861-1949) կրոնական հայացքների ազդեցությամբ. Իր նամակներից մեկում Մուրը նրան անվանում է «աստվածաշնչյան մեկնումների իմ ուսուցիչ»²: Մակայն անկերբլի է, որ այդ առանձնակի հետաքրքրությունն իր գազախակետին է հասնում, երբ 1898-ին էթել Սմիթի (1858-1944) իր ժամանակին բավական հանրահռչակ երգահանի և կանանց ընտրական իրավունքների պաշտպանության շարժման առաջնորդուհու քույրը Մերի Հանթերը, նրան նվիրում է Աստվածաշունչը: Այս մասին ընթերցողը տեղեկանում է աստվածաշնչյան թեմաներով գրված երկերի («Առաքյալը», «Քրիստի հեղեղատը, սիրիական պատմություն») նախաբանում եռլինեանի վերջինիս ուղղված երախտագիտական նամակներից: Երկարատև ու խորասուզված պրպտումների առաջին արգասիքը դառնում է 1910թ. հունիսին Լոնդոնում հրատարակվող «English Review» խորագրով ամսագրում տպագրված «Առաքյալը» ստեղծագործությունը, որն ի սկզբանե մտահոգացված էր որպես սցենար, սակայն մեկ տարի անց վերածվում է երեք գործողությամբ առանձին դրամայի: Ուշագրավ է, որ գրաքննադատներից մեկն այն անվանել է Ավետարանի վերաբերյալ «երբեմն տպագրված ամենահանդուգն, եթե ոչ ամենաստվածանարգ թեմությունը»³:

Կերոնիչյալ ստեղծագործության մանրակրկիտ թնտությունը մեկ անգամ նա փաստում է Ջ. Մուրի ընդգծված համակրանքը դեպի ֆրանսիացի գրողների, մասնավորապես ֆիլիսոփա և պատմաբան Էռնեստ Ռենանի (1823-1892) քրիստոնեության վաղ շրջանին նվիրված երկերը, որի արդյունքում էլ նա կատարում է իր ճամփորդությունը դեպի Մուրը երկիր ու հրատարակում «Առաքյալը» դրաման:

Հայտնի է, որ Էռնեստ Ռենանը, 1860-ականներին ներարկվելով Նապոլեոն III կայսեր հրամանին, կատարում է ուղևորություն դեպի Մուրը Երկիր պաշտպանելու պատերազմող քրիստոնյաների շահերը, և 1863-ին հրատարակում է «Հիսուսի կյանքը» խորագրով իր գիրքը, ապա 1866-ին՝ «Առաքյալները», իսկ 1869-ին՝ «Մուրը Պողոս» երկերը: «Հիսուսի կյանք»-ում նա Փրկչին ներկայացնում է որպես մարդ, այլ ոչ Աստված, իսկ նրան

¹ Hone Joseph, Life of George Moore, London, 1936, p 137. Letter of 22. 12.1 887

² Letters from George Moore to Edouard Dujardin, 1886-1922, ed. by John Eglington, 1929, p 109

³ Current Literature, II (Oct., 1911), p 423-24

վերագրվող հրաշքները համարում խարություն է. Ռենանի այս ուղե-
բությունն ու գրական վերոհիշյալ երկերն էլ ոգեշնչում են Ջ. Մուրիս
տարիներ անց ձեռնարկել նույն ճամփորդությունը, իսկ ճամփորդական
նոթերն օգտագործել որպես գրական երկի մտահղացում: Հետագա
ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ էթե Ռենանի կառարած
ճամփորդությունը դեպի Մուրթ երկիր հանձնարարություն էր, ապա Մուրթ
այն նախաձեռնում է զուտ անձնական գրղայատճածներով ցանկանալով
ուսումնասիրել անցյալն ու կերտել ապագան: Մյուսան Միտչելը,
անդրադառնալով վիպասանի կենսագրության այս դրվագին, գրում է.
«Միգուցե լույսը, որ Երկնքից իջավ Մուրի վրա, ուներ գրական ոգեշնչման
ընտյք. և նա, ինչպես տեսիլք, տեսավ գիրքը. Մեսիան պիտի գրեր Առաքյալի
մասին»: Երկու գրողների՝ համանման թեմայով գրված վերոհիշյալ
երկերում նմանությունների հետ մեկտեղ առկա է նաև որոշակի
տարբերություն, որը տեսանելի է անգամ սկզբնաղբյուրի ընտրության
խնդրում: Այսպես, Ֆրանսիացի հեղինակն իր ստեղծագործության համար
որպես հիմք ընտրել է Հովհաննեսի Ավետարանը, իսկ իտալացի գրողն իր
երկի համար որպես աղբյուր դիտարկում է Մարկոսի Ավետարանն ու
կաակածի ենթարկում այնտեղ ներկայացված պատմությունները: Ուշագրավ
է որ Մուրիս իր այս դրաման հրատարակում է այն ժամանակ, երբ
աշխարհի ամբողջ անգլիսախոս հատվածը տունում էր Ջեյմս թագավորի
Աստվածաշնչի ստեղծման 300-ամյա տարելիցը: Ինչպես բաց հայտնի է,
Աստվածաշնչի այս տարբերակն անգլերեն թարգմանությամբ լույս է տեսել
1611-ին Ջեյմս I արքայի գահակալության օրոք, երբ պորթուգալների
ճնշման ներքո ստեղծվում է Աստվածաշնչի նոր թարգմանությունը: Հենց
այս նշանակալից տարելիցի ժամանակ էլ Ջ. Մուրթ լույս է բնծայում
«Առաքյալը» դրաման, որը պատկերում է Հիսուսի և Պողոս առաքյալի
երևակայական ու դրամատիկ հանդիպումը հետսենների մենաստանում
Փրկչի խաչկությունից 25 տարի անց:

«Հերսևոսների առաքյալը», ինչպես հաճախ ընդունված է անվանել
Պողոսին, Հիսուսի 12 աշակերտներից չէր, սակայն նրա փառքն ավելին է.
քանի որ վերջինիս անցած ուղին ունի բավական յուրօրինակ պատմություն:
Ինչպես արդեն հիշատակեցինք, նա ծնվել է Կիլիկիայի Տարսուս քաղաքում
քրիստոնեական թվագրության առաջին տարիներին և, ինչպես վկայում են
մեզ հասած աղբյուրները, հասակ է առել փարիսեցիների ընտանիքում,
ուստի բնականաբար ժառանգել է ծնողների գաղափարները: Նախապես

⁴ Mitchel Susan L., George Moore, New York, Dodd, Mead & Co., 1916. The Internet
Archive. Accessed 19/10/2012

ևս հայտնի է եղել Մավուդ անունով, ապա ավելի ուշ հանդես է եկել Պողոս անվամբ և դարձել քրիստոնյաների պաշտելի սրբերից մեկը: Վերոհիշյալ աղբյուրները փաստում են նաև, որ Մավուդ-Պողոսն իր գործունեության արշավույսին հիմնականում հալածում էր քրիստոնյաներին և նույնիսկ իրավունք էր խնդրել այդ հալածանքն ընդարձակել ոչ քրիստոնյաներին դուրս քշել Պատենտիկից ընդհուպ Ղամասկոս: Երան այդ իրավասությունը տրվում է, և հենց Ղամասակոս գեղում ճա-նապարհին էլ նա ինչ-որ գեղբնական ձայն է լսում, որն էլ դարձի է բերում նրան: Այս վերջին իրադարձությունն էլ դարձել է Ջ. Մուրի դրամայի հիմքը, որը հետագայում ավելի խորացվում և պատկերվում է արձակագրի «Քիրիթի հեղեղատը. սիրիական պատմություն» սովորածավալ վեպում: Հատկանշական է, որ հենց այս առաքյալն է դառնում Հիսուսի գաղափարների ըերմ ջատագովն ու անխոնջ տարածողը: Հայտնի է, որ Պողոս առաքյալի շնորհիվ է քրիստոնեությունը հասել Եվրոպա: Նրա մահվան ամենահավանական տարին 67 թվականն է, երբ Ներոնի կողմից քրիստոնյաների հանդեպ սանձազերծված հալածանքների ժամանակ նրան մահապատժի են ենթարկում գլխատման միջոցով, յա էր հռոմեական քաղաքացիություն ունեցող անձանց վերապահված մահապատժը, իսկ ոչ հռոմեացիները ենթարկվում էին խաչելության: Ուշագրավ է, որ Պետրոս և Պողոս առաքյալներին մահվան են դատապարտում նույն օրը վերոհիշյալ եղանակներով:

Բնքետախյ է խնդրո առարկա դրամայի կատույցը, ուր պատումին նախորդում է գրողի ներածական նամակը, որն, ինչպես հայտնի է, սովորաբար ուղղված է լինում որոշակի անձի և պարզաբանում է հեղինակի մտադրությունները ընթերցողին նախապատրաստելով այն տեղեկության ընկալմանը, որը նամակագիրը ցանկանում է հատկապես շեշտադրել: Այս նամակը՝ խորագրված «Ներածական նամակ Աստվածաշունչն առաջին անգամ կարդալու վերաբերյալ», ուղղված է գերմանացի լրագրող և թարգմանիչ Մաքս Մեյերսֆիլդին (1875-1940), որը հրատարակել էր առաջաբան գրել «Առաքյալը» դրամայի գերմաներեն թարգմանության համար: Այն բացահայտում է Մուրի խոր հիասթափությունն ու կատաղի թշնամանքը կաթոլիկության հանդեպ, ինչպես նաև պատկերում է հեղինակին որպես Աստվածաշնչի գրական ընկաղաա: Ուստի ամենևին էլ զարմանալի չէ, որ Մեյերսֆիլդին հարցին, թե ինչու է այդպես հապճեպ տպագրվել այս դրաման, կրոնական համարձակ հայացքների տեր գրողը երկարաշունչ նամակով պարզաբանում է իր դրդապատճառներն ու, որպես նախաբան, աստվածաշնչյան պատմությունների վերաբերյալ իր կարծիքն արտահայտում է հետևյալ կերպ. «Գիրք Մենդոցն ինձ ծայրից ծայր թվում է

արտասովոր ու հետաքրքրաշարժ ժողովրդական հեքիաթների հավաքածու»⁵։

Ներածական եամակում Մուրը ոչ միայն մանրամասն վերլուծում է Աստվածաշնչի հանդեպ համայն մարդկության վերաբերմունքն ու մերժողաբար քննադատում տարածված մեկեումները, այլև հստակ մատնանշում է դրամայի, ապա նույն թեմայով առավել լայնածավալ երկ գրելու իր մտադրությունների ստույգ աղբյուրը. Չեղիակի հավաստմամբ այդ ամենի սկզբնապատճառն էսեսագիր և բանաստեղծ Ջոն Էգգինթոնի (ի դեպ, սա իռլանդացի գրող, խմբագիր Վիլյամ Քիրքպատրիկ Մագիի գրական ծածկանունն է) հավաստած լեգենդն է, թե իբր Հիսուսը չի մահացել, այլ խաչի վրա ուշակորոյս է եղել, որից հետո հետացել է Չեղկաստան ու շարունակել քարոզել այնտեղ։

Գաղափարական թեմաների տեսակետից դրաման կարելի է բաժանել մի քանի էական մասերի՝ Հիսուսի կյանքը խաչելությունից հետո, նրա քարոզների թողած ազդեցությունը մարդկության վրա և, իհարկե, առաքյալների, մասնավորապես Պողոսի վերաբերմունքը դեպի այդ նոր ուսմունքը։

Դրամայի գործողությունները ծավալվում են հեսեսների մենաստանի անկյակներից մեկում և, որպես գործող անձինք, պատկերում են Հիսուսին, վանականներին, Մարիամ Մագդաղինեցուն և Պողոս առաքյալին։

Առաջին արարվածից մինչև գործողության ավարտ Հիսուսը ներկայանում է որպես միաբանությունում ապրող աշխարհիկ եղբայր. Նրան ուրախացնում է բնության պարզեամբ գեղեցկությունը. Նրա հավաստմամբ՝ այն «Աստծո կամքի դրսևորումն է»⁶։ Բայց Հիսուսի հոգու այս անդորր, գրեթե հովվերգական վիճակը խաթարվում է Պողոս առաքյալի հանկարծահաս հայտնվելով, որը, խորապես տարված քրիստոնեության ուսմունքով, անդադար հավաստում է, թե «ասանց Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի բարի գործերը սոսկ գայթակղություններ են»⁷։ Այս խոսքերին ի պատասխան էլ Հիսուսը հայտարարում է, թե ինքն է խաչվածը, ու հերքում իր հարության լուրը, իսկ գործած հրաշքներն էլ համարում սրտի թելադրանքներ «Հրաշքը մեր կողքին է, և մեր սրտի թելադրանքով մեր իսկ իրականացրած պարտականությունները բավարար են»⁸։ Հիսուսի մտացածին հարության լուրը ցնցում է Պողոս առաքյալին, որն այն ընկալում

⁵ Moore George, "The Apostle", Dublin Maunsell and Co. LTD, 1911, p 7

⁶ Լույն տեղում, էջ 44:

⁷ Լույն տեղում, էջ 65:

⁸ Լույն տեղում, էջ 70:

է որպէս աստվածանարգություն, իսկ հրաշքը՝ սատանայի ձեռքի գործ, ու հայտարարում. «Ես բազում հրաշքներ ու տեսել ու շատերն էլ Աստուծո շնորհիվ իրականացրել, բայց հիմա ես տեսնում եմ մի հրաշք, որ գործվել է սատանայի ուժով»⁹։ Ուստի եւս աճապարում է վկաների հետեւից, որպէսզի ապացուցի, որ Հիսուսը ստախոս է, իսկ մարմնի վրայի հետքերն էլ՝ վեռնի կամ չար հրեշտակի ձեռքի գործը։ Եվ դրամայի եւեց այս հատվածում էլ քննարկողի առջեւ հասնում է Հիսուսի բացարձակապէս մարդկային կերպարը, եւս սկսում է տագնապել ու վախենում է, որ իրեն վերստին կտանջեն ու խաչ կբարձրացնեն, իսկ մեեաստանի վանահայրը խոստանում է իր պաշտպանությունն ու աջակցությունը։

Ուշագրավ է, որ Պողոս առաքյալը վերադառնում է իսկապէս վկայի ուղեկցությամբ, որը, սակայն, ոչ թե ժխտում, այլ առավել խորն է հավաստում Հիսուսի ինքնությունը։ Արդեն ձեռացած ու երբմանի գեղեցկությունը կորցրած Մարիամ Մագթաղիենցին, Հիսուսին տեսնելով, կարծես վերագտնում է իր հոգեկան կորսվն ու զիմնելով նրան աղերսում է. «Նու նորից մեզ մոտ ես եկել։ Մենք քո կարիքն ունենք, ուսուցիչ։ Մենք ուզում ենք տեսնել ու լսել քեզ»¹⁰։ Այսինքն՝ տարիքն առած Մագթաղիենցին ինչ-որ առումով խոսում է ամբողջ մարդկության անունից ու հավաստիացնում, որ Փրկչի խաչելությունից հետո միայն մարդ արարածը գիտակցել է իր կորուստն ու փնտրում է կորցրածի վերադարձը։ Ուստի Հիսուսի Մագթաղիենցուն ասված խոսքերը կարելի է ընդունել որպէս յուրատեսակ ուղերձ՝ ուղղված համայն մարդկությանը. «Իմ հանդէպ սիրո մեջ է ապրում քա գեղեցկությունը, և այն հավերժ կապրի երկրի վրա, ամենուր, ուր իմ Ավետարանը կբարոզվի, ու եւս երկերում սրբերի մեջ, հավերժությունից մինչև հավերժություն»¹¹։ Ասել է թե՛ գեղեցիկը, այսինքն՝ հոգու անապական վիճակը, հարատն է միայն հիսուսյան քարոզների մարմնավորման շնորհիվ։

«Առաքյալը»՝ դրաման ուշագրավ է եւս իր հետևորդների առաքյալների վերաբերյալ Քրիստոսի արտահայտած գաղտնաբերելով, երբ վերջինս փորձում է տարհամոզել քրիստոնեության ու եւեց իր իսկ Հիսուսի անձով մոլեգին տարված Պողոսին հավատալ հարության իսկությանը։ Ուստի անդրադառնալով Պողոս առաքյալի բնութագրին՝ Հիսուսն ասում է. «Պողոսն իմ աշակերտների շարքում ամենավերջինն է, եւս մեկը, որ մերժում է իմ գոյությունը։ Նա երանցից է, որի հավատը խարսխված է իմ հարության

⁹ Նույն տեղում, էջ 74։

¹⁰ Նույն տեղում, էջ, 95։

¹¹ Նույն տեղում, էջ 92։

վրա»¹², իսկ Պետրոս առաքյալի մասին էլ հշում է. «Հավատը միշտ էլ դժվար է տրվել Պետրոսին, և ա հին մնացուկների կապոց է և մարգարեի հետևորդ»¹³: Ասել է թե՛ Հիսուսի համար անընդունելի են առաքյալների ծավալած գործունեությունները, քանի որ նրանց հավատն ամենին էլ ամուր չէ:

Դրամայի կենտրոնական կերպարներից է անշուշտ, եսև Պողոս առաքյալը, որն անընդհատ խոսում է Դամասկոսի ճանապարհին իր տեսած հրաշքի մասին, երբ Հիսուսը հայտնվել էր ու հորդորել նրան տարածել իր ուսմունքը: Այս տեսիլքն էլ հենց Պողոսին վերածում է մոլի քրիստոնյայի, որը, չանտալով ակուր հալածանքներին, ջանասիրաբար տարածում է քրիստոնեությունն ու ապատմի պես անհողորդ է հիսուսյան ուսմունքի վերաբերյալ ցանկացած հակառակվող փաստարկի հանդեպ: Հետևաբար Հիսուսը մեղադրում է նրան անհիմն հավատի համար ու վերջինիս հետ զրույցի ժամանակ հայտարարում. «Ու երբեք իմ աշակերտներին իմ ուսմունքի վերաբերյալ հարցեր չես տվել, այլ քարոզել ես միայն հրաշքի մասին, կարծես թե դա բավարար է»¹⁴: Իսկ անդրադառնալով բուն հրաշքին՝ Հիսուսը բացատրում է. «Եթե դու տեսնում ու լսում ես, ապա սոսկ աչքով ու ականջով»¹⁵, և հենց այդ պատճառով էլ առաքյալը չի ճանաչում Հիսուսին, թեպես հավաստում էր, թե տեսել է նրան ու լսել ձայնը: Այսինքն՝ այս հակասության արմատները պետք է փնտրել հոգևոր հավատի բացակայության մեջ: Հենց այս հանգամանքն էլ պայմանավորում է Հիսուսի ընդդիմությունը Պողոս առաքյալի քարոզչական գործունեությանը: Ավելին, մարդկության Փրկիչը փորձում է կանխել իր ուսմունքի խեղաթյուրումը, պատրաստվում է գեալ Երուսաղեմ ու տեղի հոգևորականության առջև բացահայտել ամբողջ ճշմարտությունը: Այդ որոշումը, որն այդպես էլ չի չիականանում, Հիսուսի ներքին պայքարի վերջնական հանրագումարն է, իսկ Պողոս առաքյալի համար նշանակում է նոր ձեռք բերած կենսական հայացքների, իր իսկ ստեղծած պատրանքների փլուզում: Ուստի այս բախումը բերում է անակնկալ ու ցեցող ավարտի. երբ Հիսուսը, դիմելով Պողոս առաքյալին, հայտարարում է, որ ինքը «Նազարեթից հարություն է առել և անգուցյալների միջից, որ դեմ կանգնի թեզ»¹⁶, հուսահատված առաքյալն Աստծո անունից ապուակում է Հիսուսին, իսկ վերջինս էլ վայր է ընկում ու

¹² Լույս տեղում:

¹³ Լույս տեղում, էջ 94:

¹⁴ Լույս տեղում, էջ 88:

¹⁵ Լույս տեղում, էջ 97:

¹⁶ Լույս տեղում, էջ 99:

մահանում: Մեփական արարքից երկուդամ Պողոս առաքյալը վախուստի է դիմում, թեպետ բնավ չի երկմտում Հիսուսի վախճանի տեղին լինելու մեջ ու նկատում է. «Լավ է, որ ես մահացավ, չնայած հարվածն իմ նախաձեռնությունը չէր, բայց եկավ Աստուծոց, ինչպես որ կաթական է գալիս... Եթե այս մարդը ստել է, ես արժանի է մահվան, իսկ քրիստոնեությունն էլ փրկվել է նրա մահով, իսկ եթե ճշմարտությունն են էր ասում: Ճշմարտությունն Աստծո ձեռքերում է, և ես գնում եմ Հոսմ' ընդունելու իմ մահը ու այդ մահվան միջոցով ընդունելու իմ Քրիստոսին, իմ ձեռքերումը, իմ աշխատանքի պտուղը»¹⁷: Ասել է թե՛ Պողոս առաքյալը Հիսուսին սպանում է ոչ թե կանխամտածված, այլ Աստծո կամոք, որպեսզի առաքյալների կատարած գործերն ի դերն չլինեն, քանի որ մարդկությունը քան տարուց ավելի հավատում էր երկնքում բնակվող Հիսուսին, մինչդեռ իրական Հիսուսն ապրում էր մենաստանում իբրև սովորական վանական, իսկ իր մասին պատմվող պատմություններն էլ համարում էր խաբուրություն ու փորձում պոկել կեղծիքի թողը:

Այսպիսով, «Առաքյալը» դրամայում ընթերցողը ակնհաստե է լինում Հիսուսի խորապես մարդկային կերպարին, որը փաստվում է վանականների վերջինիս մասին արտահայտած խոսերով: Անա թե ինչպես է մենաստանի վանահայրը բնութագրում նրան. «Ես այնչև չի ուզում ներքաշվել կյանքի տագնապների մեջ, որը ես ընդմիշտ լքեց, երբ խաչելությունից հետո վերադարձավ մեզ մոտ մահից մազապորձ, Ոչ որ չգիտի՞ ինչպես, զրկված սեփական տառապանքների հիշողությունից, մեզ բոլորիցս ամենապարզ հոգին, որ լուսարացից մինչև մթնշաղ կատարում է իր աշխատանքը»¹⁸: Ուստի, երբ վանահայրն ու վանականները տեսնում են Հիսուսի անշնչացած մարմինը, բնավ չեն կասկածում Պողոս առաքյալին, այլ այդ մահը վերագրում են նրա հոգեկան խռովքին: Իսկ Պողոս առաքյալը, որին նույն վանականները համարում են «վեսասկզար մարդ, որ սերմանում է հերետիկոսություն և խռովություն, մարդ, որը Ղամասկոսում տեսած իր տեսիլքից հետո խելագարվել է»¹⁹, հեռանում է խորապես համոզված իր կրոնական գաղափարների ճշմարտացիության մեջ ու Հիսուսի ուսմունքով սոցորված, և ինքն իրեն բնորոշելիս պնդում է. «Ես խաչված եմ Քրիստոսի հետ, չնայած ես ապրում եմ, բայց ոչ թե ես, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ: Քրիստոսը հառնել է իմ մեջ: Ես հարություն եմ»²⁰: Ասել է թե՛

¹⁷ Լույս տեղում, էջ 100:

¹⁸ Լույս տեղում, էջ 78:

¹⁹ Լույս տեղում, էջ 79:

²⁰ Լույս տեղում, էջ 97:

մարդկությունը շարունակում է հավատալ հրաշքներին, քանի որ դրանք է համարում իր կենսատու ուժը:

Հ. Ա. Շարուրյան

Իրականի և գեղարվեստականի հարաբերակցությունը

Ջորջ Մուրի «Առաքյալը» դրամայում

Ամփոփում

Հոդվածը եվրոպան է անգլիացի եշանավոր գրող Ջորջ Մուրի «Առաքյալը» դրամայի հիմնախնդիրներից մեկի՝ իրականի և գեղարվեստականի հարաբերակցության քննությանը: Մասնավորապես նկատվում է, որ համաշխարհային գրականության համաբնույթ երկերի մեջ խնդրո առարկա դրաման առանձնանում է էական հատկանիշով: Գրողն անդրադարձել է Հիսուս Քրիստոսի ու Պողոս առաքյալի հանդիպման վերաբերյալ տարածված լեգենդին և այն ընդունելով իրրև հիմք՝ ներկայացրել քրիստոնեության վերաբերյալ սեփական դիրքորոշումն ու աստվածաշնչյան մեկնումները՝ ամենուրեք շեշտադրելով Փրկչի բացառապես մարդկային կերպարը:

А. А. Шарурия

Соотношение реального и художественного в драме Джорджа Мура

«Апостол»

Резюме

Статья посвящена анализу одной из основополагающих проблем драмы известного английского писателя Джорджа Мура «Апостол». В частности, отметим, что среди подобных произведений мировой литературы исследуемая драма выделяется существенной особенностью: писатель обратился к известной легенде о встрече Иисуса Христа и апостола Павла и, принимая ее за основание, представил собственную позицию относительно христианства и библейских интерпретаций, акцентируя повсюду исключительно человеческий образ Спасителя.

H. A. Sharuryan

Correlation of Reality and Fiction in George Moore's Drama "The Apostle"

Summary

The article is devoted to the analysis of one of the issues, i.e. the correlation of reality and fiction in the drama by the famous English writer George Moore "The Apostle". It particularly notes the essential feature by which the drama under consideration stands apart from similar literary works of world literature: the author has turned to the widespread legend about the meeting between Jesus and Apostle Paul and by making it the basis for his work presented his own standpoint on Christianity and biblical comments and in every case emphasized the absolutely human nature of the Savior.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ԴԱԶԱՐՑԱՆ Երեխայի կերպարը Վիյամ Սարոյանի փոքր արձակում	3
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՑԱՆ Իրականի և գեղարվեստականի հարաբերակցությունը Ջորջ Մուրի «Առաքյալը» դրամայում	13
ԻՇԽԱՆ ԴԱՂՅԱՆ «Երագ» պատումային հնարի գործառության դասակարգումը	22
ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ Խորհրդանիշները Էռեստո Հեմինգուեյի կարճ պատմվածքներում	32
ՆՈՆԱ ԴԱՎԹՅԱՆ Ինքնակենսագրության ժանրի արձարձումները սփյուռքահայ գրականության մեջ	42
ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Միմոն Միմոնյանի սասունցի հերոսները	52
ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հակոբ Պարոնյանի մանկավարժական հայացքները	61
ՏԱԹԵՎԻԿ ՄԵՐՋԱՆՑԱՆ Կյանքի ու մահվան ընկալումները Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերում	70

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՆՍ

ՈՌՈՋԱՆԱ ՄԱՑԻՑԱՆ

Հովհաննես Գրիգորյանի միջանկախության շրջանի պոեզիայի թեմատիկ ընդգրկումները 80

ՀՈՒՓՄԻՄԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Երգիծանքի լեզվատճական միջոցները Հակոբ Պարոնյանի «Շողոքորթը» կատակերգության մեջ 91

ՆԱԼԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայն ու հայկական ամերիկյան միջավայրում. Հակոբ Կարապենցի առաջին «Անձանոթ հոգիներ» ժողովածուի հետքերով 100

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Ավանդական ու երարարական Արմեն Մարտիրոսյանի պոեզիայում 110

ԼՈՒՍՈՒՆ ԱՂԱՍՅԱՆ

Հակադրությունը Պետրոս Դուրբանի «Տրտուկը» և «Ջրջում» բանաստեղծություններում 118

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ռուբեն Սևակի փիլիսոփայությունը 20-րդ դարասկզբի փիլիսոփայության համապատկերում 125

ԳՅՈՒՆԼԱՐԱ ՋԱՐԳԱՐՅԱՆ

Գյուղաշխարհը Հրանտ Մաքևոսյանի ստեղծագործություններում 135

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈՔՅԱՆ

Հայ պարբերական մամուլի մատենագիտության
հատորային ցանկեր 142

ՊՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԱԿՈՒՑԹ

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վրաստանի 1924 թ. հակախորհրդային ապստամբության
արձագանքները ակնուրբահայ մամուլում 151

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Այրաքաղյան կողմնակալության-փոխարքայության
հանձնումը Վաչե Ա Վաչուտյանին 163

ԱՆՆԱ ԱՂԱՄՅԱՆ

Արմեն Օհանյանի «Մարում» դաշնամուրային մանրանվագը 171

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Օտար ազդեցությունները հայ հոգևոր մշակույթում, ազգային
ինքնության հարցեր 177

ԳՈՌ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

Բեզար Ամիրջանի ուսումնառությունը Պետերբուրգի և
Միլանի կոնսերվատորիաներում 188